

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

**Վոլոդյա ՅՈՎԱՆՓՅԱՆ**

ԵՊՀ Տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր

Բանալի բառեր. տնտեսական աճ, անցումային երկրներ, ինստիտուտներ

Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական աճի նախադրյալների, գործոնների և հեռանկարների վերաբերյալ գրվել են բազմաթիվ աշխատություններ և հոդվածներ, սակայն կարևոր նշանակություն ունի այդ «ֆենոմենի» որոշ ասպեկտներ, որոնք կարևոր դեր ու նշանակություն ունեն տնտեսության ու հասարակության զարգացման համար: Մասնավորապես խոսքը վերաբերվում է շուկայական տնտեսության ինստիտուտների կառուցվածքին, դրանց շրջանակներում իրականացվող տնտեսական քաղաքականությանը և գործիքների փոխազդեցության միջև առկա արդյունավետությանը:

Հարկ է նշել, որ շուկայական տնտեսության ձևավորման և կայացման սկզբնական ժամանակաշրջանում ինստիտուցիոնալ գործոնների դերը թերագնահատվում էր և կարևոր նշանակություն էին տալիս տնտեսության ազատականացմանը, կայունությանը և մասնավորեցմանը:

Այսուհանդերձ տնտեսական աճը անցումային տնտեսության երկրներում դրսևորվում էր որոշակի հակասություններով, որոշ երկրներում այն կըրճատվում էր, մյուսներում մնում էր նույնը կամ աճում էր : Այդ մասին վկայում են աղյուսակի տվյալները:

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ բոլոր հետխորհրդային երկրներում 1990թ սկզբին արձանագրվել է տնտեսական անկում, իսկ Լեհաստանում և Չինաստանում՝ տնտեսական աճ: Դա ԽՍՀՄ հանրապետություններում հիմնականում պայմանավորված էր 1980-1990թթ. տնտեսական աղետով: Ռուսաստանում այն շարունակվեց մինչև 1998թ-ը, Հայաստանում 1994թ-ին արդեն տեղի ունեցավ տնտեսական աճ: Սակայն պետք է նշել, որ ԱՊՀ երկրների շարքում ՀՆԱ-ի ամենամեծ կորուստը եղավ Հայաստանում (59%): Այնուհետև մի շարք հետխորհրդային երկրներում (Բելառուսիայում, Ադրբեջանում, Ղազախստանում, Թուրքիայում, Ուզբեկստանում և Մերձբալթյան երկրներում) մինչև 1990թ առաջին 5 տարիների ընթացքում տեղի ունեցավ տնտեսության կայունության աճ:

Աղյուսակ 1. ՀՆԱ-ի աճի տեմպերը հետխորհրդային երկրներում, տոկոսներով<sup>1</sup>

	1992-2000	2001-2008	2001	2003	2005	2008	2009	2010
Ռուսաստան	-4,0	6,5	5,1	7,3	6,4	5,6	-7,9	4,0
Բելոռուսիա	-1,2	8,2	4,7	7,0	9,4	10,0	0,2	2,4
Սլովակիա	-9,2	6,3	6,1	6,6	7,5	7,2	-6,5	2,5
Ուկրաինա	-8,0	6,9	9,2	9,6	2,7	2,1	-15,1	3,7
Ադրբեջան	-5,6	17,0	9,9	11,2	26,4	11,6	9,3	2,7
Հայաստան	-2,9	11,9	9,6	14,0	13,9	6,8	-14,8	1,8
Վրաստան	-7,9	7,6	4,8	11,1	9,6	2,1	-4,0	2,0
Ղազախստան	-2,7	9,3	13,5	9,3	9,7	3,2	1,2	2,4
Ղրղստան	-3,6	4,7	5,3	7,0	-0,2	7,6	2,3	4,6
Տաջիկստան	-9,4	8,8	9,6	11,0	6,7	7,9	3,4	4,0
Թուրքմենիա	-2,1	14,3	20,4	17,1	13,0	10,5	4,1	12,0
Ուզբեկստան	-0,1	6,6	4,2	4,4	7,0	9,0	8,1	8,0
ԱՊՀ-ը միջինը	-4,3	7,0	6,1	7,8	6,7	5,5	-6,6	4,0
Լատվիա	-3,7	7,3	8,0	7,2	10,6	-4,6	-18,0	-4,0
Լիտվա	-2,8	7,3	6,6	10,2	7,8	3,0	-15,0	-1,6
Էստոնիա	-0,1	6,6	7,7	7,1	9,2	-3,6	-14,1	-0,8
Լեհաստան	+4,7	4,1	1,2	3,9	3,6	4,9	1,7	2,7
Զինաստան	+10,6	10,3	8,3	10,0	10,4	9,0	8,7	10,0

Հետագայում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին (2008-2010թթ.) մի շարք երկրներում (Ռուսաստան, Սլովակիա, Ուկրաինա, Հայաստան և Մեծ Բալթյան երկրներում) կրկին արձանագրվեց տընտեսական անկում: Հայաստանում ՀՆԱ-ը կրճատվեց 14,8%, որը ԱՊՀ երկրների շարքում կրկին ամենամեծ ցուցանիշներից մեկն էր:

Շուկայական վերափոխումներից հետո տնտեսության դինամիկայի վերլուծության սկզբնական ժամանակաշրջանում առաջնակարգ պլան էր մղվում կառուցվածքային գործոնները և ազգային տնտեսությունների առանձնահատկությունները (կառուցվածքային վերափոխումներ, կայունացում և ազատականացում):

Կառուցվածքային վերափոխումների ժամանակակից պայմաններում տնտեսական աճ ապահովելու համար նախ անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր գործոն: Առաջին, տնտեսական ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման հիման վրա բախշման արդյունավետության հետևողական բարելավումը:

<sup>1</sup> Национальная экономика, магистр. М.2015 էջ. 57-58:

Երկրորդ, տնտեսության անկման ժամանակաշրջանից հետո կապիտալի կուտակման մակարդակի բարձրացումը՝ երկրում առկա ներքին խնայողությունների հիման վրա: Հայաստանում բացակայում է թե՛ մեկը և թե՛ մյուսը:

Կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճ ապահովելու համար Հայաստանը նախ հունք արտահանող երկրից պետք է դառնա պատրաստի արտադրանք արտահանող և երկրորդ Հայաստանում կրճատել չափից ավելի նախարարությունների թիվը և բյուջեյում դրանց համար հատկացված միջոցները օգտագործել ներդրումների նպատակով:

Սակայն, քաղաքական և տնտեսական ազատության ձեռք բերման սկզբնական ժամանակաշրջանում տնտեսական անկումը և դրան հետևող անցումային ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ էր նաև ինստիտուցիոնալ վերափոխումներ: Շուկայական հարաբերությունների անցումը պահանջում էին ինստիտուտների (պետական սեփականությունը կենտրոնացված պլանավորում, գների վարչական կարգավորում և այլն) վերափոփում: Եվ այդ փոփոխությունները հիմնականում պետք է իրականացվի պետության կողմից՝ տնտեսության անուղղակի կարգավորման միջոցով: Այսինքն պետությունը պետք է սահմանի “խաղի կանոններ” և հետևի դրանց իրականացմանը: Այդ շուկայական “խաղի կոնոնները” որոնք պետք է իրականացվեն օրենքով սահմանված կարգով իրենցից ներկայացնում են որպես ինստիտուտներ:

Կարևոր է նշել, որ տնտեսագետները <<ինստիտուտ>> հասկացության ներքո նկատի ունեն ֆինանսական կամ պետական ինստիտուտներին: Տվյալ դեպքում մենք նկատի ունենք նաև այնպիսի ինստիտուտներին, որոնք կազմակերպում, ձևավորում և վերահսկում են տնտեսական գործընթացները: Շուկայական ինստիտուտների շարքին կարելի է դասել նաև շուկայական գինը, ձեռնարկությունների միջև առկա պայմանագրերը, արբիտրաժային և դատական ընթերցակարգերը, սպառողների միությունը և այլն: Ընդհանուր առմամբ ինստիտուտները իրենցից ներկայացնում են.

- օրենքով կամ ավանդույթով կարգավորվող ընթերցակարգերը և վարվելակերպի կանոնները,
- շուկայական սուբյեկտների շահերը պաշտպանող օրենսդրական և կարգավորող նորմերը,
- տարբեր շուկայական սուբյեկտների պահանջմունքները բավարարող կազմակերպությունները և վարչական – քաղաքական կառույցները՝ սկսած կառավարությունից և կենտրոնական բանկից միջև արժեթղթերի շուկա և

հակամենաշնորհային մարմինները, առևտրային բանկերը ու ապրանքնային շուկաները և այլն<sup>2</sup>:

Համաձայն Հայաստանի ազգային մրցունակության գեկույցի՝ հանրային կամ պետական ինստիտուտներով Հայաստանը 131 երկրների շարքում զբաղեցնում է 92-րդ տեղը: Իսկ մասնավոր ինստիտուտներով Հայաստանը զբաղեցրել է 115-րդ տեղը: Այդ բոլորը նշանակում է, որ Հայաստանում թե՛ հանրային և թե՛ մասնավոր ինստիտուտները գտնվում են շատ ցածր մակարդակի վրա<sup>3</sup>:

Կարելի է եզրակացնել, որ շուկայական հարաբերությունների ձևավորման ինստիտուցիոնալ գործոնների դերը թերագնահատվում էր: Շուկայական տնտեսությանն անցնելու մոտեցումները կարևոր նշանակություն են տալիս տնտեսության ազատականացման, կայունության և մասնավորեցմանը, քան համապատասխան ինստիտուտների ձևավորմանը և կայացմանը:

Օրինակ, տնտեսագետներ Դե Մելոն և Ալան Գելբը օգտագործել են իրենց կողմից հաստատված ազատականացման ինդեքսը, որ ներառում է ներքին շուկայի ազատականացման մակարդակը արտաքին առևտրի ազատականացման մակարդակը և մասնավորեցման ծավալը և ցույց են տվել, որ անցումային երկրների տնտեսական աճը (1900-ականների կեսին) հիմնականում պայմանավորված է եղել այդ ինդեքսով<sup>4</sup>:

Սկսած 1900-ական թվականների 2-րդ կեսերից անցումային տնտեսության երկրներում ավելի մեծ ուշադրություն սկսեցի դարձնել շուկայական վերափոխումների ինստիտուցիոնալ կազմին:

Անցումային երկրներում տնտեսական քաղաքականության մեջ ի հայտ են գալիս երկու խումբ գործոններ: Առաջինը, ներդրումների միջավայրի բարելավման միջոցառումներն են: Երկրորդ, օրենսդրական փոփոխություններ են, որոնք ուղղված են ձեռնարկություններում կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգի ստեղծմանը:

Այսպիսով, ինստիտուտների որակի բարձրացումը, ներդրողների իրավունքի պաշտպանվածությունը և կառավարիչների վերահսկման համակարգի զարգացումը, վարկի և ներդրումների հասանելիության մակարդակի բարձրացումը դառնում է տնտեսական աճի գլխավոր գործոնը: Սակայն պետք է

---

<sup>2</sup> Ինստիտուտներ և տնտեսական աճ, 2010թ. էջ 40:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 48:

<sup>4</sup> St'u De Melo, Alan Gdb (1997) *Transiton to Date: A Lomperative Overview*, in Salvatore Zecchimi, (Ed) *Lessons from the Economic Transirion: 1900s*. Dovarecht: Kluwer, pp. 59-78

նշել, որ անցումային ժամանակաշրջանում համաձայն Մրցունակության համաշխարհային զեկույցի՝ Հայաստանի ընդհանուր ինստիտուցիոնալ որակը եղել է ցածր մակարդակի և մեծ փոփոխություններ չի եղել: Դրանում առկա են եղել լուրջ թերացումներ, իսկ ինստիտուցիոնալ գործունեության կատարողականը տարածաշրջանում ունեցել է հետևյալ պատկերը:

**Աղյուսակ 2.** Ինստիտուցիոնալ գործունեության կատարողականը տարածաշրջանում<sup>5</sup>:

Ինստիտուտներ	Վարկանիշը 2009	Վարկանիշի փոփոխություն 09/08 միավոր	Միավոր 2009	Միավորի փոփոխություն 08/09%
1	2	3	4	5
Հայաստան	95	1	3,49	-0,1%
Վրաստան	72	-3	3,82	-2%
Ադրբեջան	55	7	4,15	2%

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ տարածաշրջանում Հայաստանի ինստիտուցիոնալ վարկանիշը ավելի ցածր է եղել քան Վրաստանում և Ադրբեջանում:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Հայաստանում տնտեսական ճգնաժամի հետևանքով ՀՆԱ-ի կրճատման մեծ չափերը (59% և 14,8%) պայմանավորված է եղել նաև ինստիտուցիոնալ միջավայրի ցածր մակարդակով:

## Վոլոդյա ՉՈՎԱԵՓՅԱՆ

<sup>5</sup> Հայաստանի ազգային մրցունակության զեկույց (2009) նախարարության էկոհամակարգի սերմանումը “Տնտեսություն և արժեքներ” հետազոտ. կենտրոն, 2009, էջ 27:

## **Տնտեսական աճի առանձնահատկությունները անցումային տնտեսության երկրներում**

*Քանալի բառեր. տնտեսական աճ, անցումային երկրներ, ինստիտուտներ*

Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական աճի նախադրյալների, գործոնների և հեռանկարների վերաբերյալ գրվել են բազմաթիվ աշխատություններ և հոդվածներ, սակայն կարևոր նշանակություն ունի այդ «ֆենոմենի» որոշ ասպեկտներ, որոնք կարևոր դեր ու նշանակություն ունեն տնտեսության ու հասարակության զարգացման համար: Մասնավորապես խոսքը վերաբերվում է շուկայական տնտեսության ինստիտուտների կառուցվածքին, դրանց շրջանակներում իրականացվող տնտեսական քաղաքականությանը և գործիքների փոխազդեցության միջև առկա արդյունավետությանը:

### **Володя ОВСЕПЯН**

#### **Экономический рост в странах с переходной экономикой.**

*Ключевые слова: экономический рост, страны с переходной экономикой, институты*

В экономической литературе было написано много работ и статей о предпосылках, факторах и перспективах экономического роста, однако важно раскрыть некоторые аспекты этого «феномена», которые имеют важную роль в экономическом и социальном развитии. В частности, это относится к структуре институтов рыночной экономики и эффективности взаимодействия между существующими инструментами в рамках экономической политики.

### **Vladimir HOVSEPYAN**

#### **Economic growth in the countries with economies in transition**

*Key words: economic growth in the countries with economies in transition, institutions*

There has has been written many papers and articles economic literature on preconditions, shortcuts, factors and prospects for economic growth, but it is important to disclose certain aspects of this "phenomenon", which have an important role in the economy, and social development. In particular, this applies to the structure of the institutions of market economy and the efficiency of interaction between the existings tools in economic policy.